

Անցիող տարան ընթացքին, Ս. Աթուոյս հովանիին տակ կայացած Հոգեորականաց Համագումարին առիթով լոյս տեսած Սիոնի բացառիկ թիւը զրկուած էր տեսնին արտասահմանի գանազուն շրջաններու մէջ ծառայող հոգեորականներու, որոնցմէ ռմանք իմբադրութեանս շրկած են գնահատական և քաջալիբական գրութիւններ, Ատոնցմէ երկուքը կը ներկայացնենք օտորեւ:

ԽՄԲ.

Նիւ Եորթ, 20 Յունուար 1981

Պատուարժան Խմբագրութիւն Սիոնի

Երուսաղէմ — Ս. Յակոբ

Շնորհակալութիւն եւ շնորհաւորութիւն Սիոնի է-Ժ 1980 բացառիկին համար՝ նուիրուած Երուսաղէմի հոգեւորական տաներու աննախընթաց համագումարին — որ եղաւ պատմական զեղեցիկ նախընթաց մը — եւ երբեակ յորելինական հանդիսութիւններուն՝ իբր գնահատանք եւ հատուցում երսխտաւորներու:

«Արժան եւ իրաւ: Հարկս հարկեւորաց՝ պատիւս արժանաւորաց»:

Անշուշտ որ ինձ նման հարկադրաբար եւ ակամայ մեր տան եւ ընտանիքի մէջ տեղի ունցող համագումարէն եւ հանդիսութիւններէն զրկուողներուս համար հաճելի եւ մխիթարական եղաւ Սիոնի միջոցաւ հաղորդ լինել կատարուած եղելութիւններուն: Գոհ եմ եւ քաւարարուած հետաքրքրութիւններուս համար: Շատ ապրիք:

Ուրախ եմ տեսնելով համագումարին լաւ մտածուած ծրագրիին գտած ընդունելութիւնը, առաւել եւս իմանալով անոր արծազանգը՝ նշանակուած նիւթերուն մշակութեամբ. յարուցուած հարցերուն քննարկութեամբն ու եղած եզրակացութիւններովը: Լուրջ եւ տեղին:

Մասնաւորաբար գնահատելի է տեսնել որ համագումարին մէկ ծայրէն միւսը հրեղէն գիծով մը կ'երեւի Հայաստանեայց Եկեղեցւոյ կոյումին եւ զերին ճշգրիտ հասկացողութիւնն ու ընտրողութիւնը՝ իսկական, հարազատ.

Այս կէտը իրաւամբ կը շեշտէ Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատրիարքը նշելով, «Սաղիմական սիրունոր ուրոյն յատկանշական ոգի մը ունի եւ կապուած է ուժգին կերպով, զօրաւոր կերպով եկեղեցական գաղափարին, ազգային գաղափարին, էջմիածնի գաղափարին» (Սիոն, էջ 64:)

Կը մնայ որ, Տ. Շնորհք Պատրիարքի առաջարկութեան համաձայն, Ամենայն Հայոց Կաթողիկոսին հաճութեամբ կազմուի յանձնախումբ մը «Որպէսզի հրահրէ, ծրագրէ եւ գործադրութեան ճամբու մէջ դնէ այն բոլոր հարցերը, որոնք նիւթ եղան համագումարին խորհրդակցութեան» (Նոյն, անդ:)

Գնահատելի է տարուած աշխատանքը: Կը մաղթենք յաջողութիւն:

Կրկին շնորհակալութիւն եւ շնորհաւորանք համագումարին եւ անոր լուսապատկերը Սիոնի թիւերով հռաքմակող Բարտուղարութեան եւ Խմբագրութեան:

Եղբայրական սիրով

Զիրզ Աղօթակից

ԶԳՕՆ ԵՊՍ. ՏԷՐ - ՅԱԿՈԲԵԱՆ

Մարտի 11, 4 Փետր. 1981

«Սիոն» Ամսագրի Յարգարժան Խմբագրութեան  
Երուսաղէմ

Քրիստոսով սիրելի եղբայրներ,

Մեծ հաճոյքով ստացած եմ «Սիոն» Ամսագրի պատկառելի բացատրիկը, նուիրուած Երուսաղէմի Համագումարին եւ Յորելինական հանդիսութիւններուն: Իմ սրտա-

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ — ԲԵՄԱԿԱՆՔ

● Եր. 3 Յուն. — Ս. Արգառու քաղ. մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարսեղ Աբեղայ:

● Կիր. 4 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարուիթիւն, մեր վերնամարտն մէջ. Ժամարարն էր Հոգշ. Տ. Արփիար Աբղ. Տէմիրհան: Ս. Թարգմանչաց Վարժարանի աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն:

— Կէսորէ ետք, Դաւիթ մարգարէի և Յակոբոս Տեառնեղբոր նախատեսակը բացաւ Ս. Ծննդեան պահէր կանխող եօթնեակը Աւագ Տօնուն: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց արարողութեանը և թափօրով բարձրացաւ Պատրիարքարան: Վերաշափառի կողքէրզանց առնուեցաւ աննպատու օդի պատճառաւ:

● Բշ. 5 Յուն. — Գաւթի մարգարէի և Յակոբայ Տեառնեղբոր (Տօն Առաքելակն Ս. Արտոյոն Տեառնեղծի): Ս. Աթոռոյոս տօնը կատարուեցաւ աւանդական շքեղութեամբ: Բառք ի բարձունսի առնեմ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը զգեստաւորեալ բարձրացաւ Տեառնեղբոր Աթոռի պատուաւորակին, ուր ապա ընդունեց Միաբանութեան շնորհաւարութիւնները: Աւագ Սեղանից վրայ կանդիօնաւր Ս. Պատարագը մատուցեալ առնելի զոյգ սուրբերու մասին քարոզեց Գերշ. Տ. Կիրեղ Եպ.: Իսկ Գերշ.

Տ. Եանէ Աբեղայ. նախագահեց հանդուհեալ պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին:

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Ս. Ստեփանոսի նախատեսակին: Բարձրաւ. Կիր Հայրերն էին Հոգշ. Տ. Անդեան Վրգ. և Հոգշ. Տ. Արփիար Աբեղայ:

● Գշ. 6 Յուն. — Ս. Սեփանոսի ճախովկայից: Բառք ի բարձունսի առնեմ և մինչև աւարտուած ժամերգութեան, Ս. Աթոռոյոս 3 Սարկապանները և Նոյն թիւով Ռարարկիւնները, առաջնորդութեամբ բարձրաւոր զոյգ Հայրերուն, պանծացուցին յիշատակը իրենց մատակարարին: Ներկայ էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Սուրբ Ստեփանոս մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռեկի Աբեղայ:

— Երեկոյեան, Ժառանգաւորացի սեղանաւ մէջ կատարուեցաւ աւանդական ընթերիքը, որուն աւարտին Սրբազան Պատրիարքը հանդէս եկաւ յարգարական խօսքերով: Նոյնըքաւ էր նախագէտ Վարժարանի ուսուցիչներէն Հոգշ. Տ. Անուշաւան Վրգ.:

● Գշ. 7 Յուն. — Գլխաւոր առաքելաց նախատեսակին նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

● Եշ. 8 Յուն. — Պետրոսի և Պօղոսի առաքելաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Ծառար Ս. Պետրոսի վերին մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրգ.:

● Ուր. 9 Յուն. — Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը վերաշափառեով մուտք գործեց Մայր Ծառար և նախատեսակին նախագահելէ ետք թափօրով բարձրացաւ Պատրիարքարան:

գին շնորհակալութիւններս կը յայտնեմ այս գեղեցիկ առաքումին համար: Եւստ ուրախութեամբ պիտի ուզէի շարունակաբար ստանալ ձեր օգտաշատ հանդէսը:

Ձեր Համագումարին մէջ արծարծուած նիւթերը խիստ օգտակար են ո՛չ միայն եկեղեցականներուն, այլեւ ամէն հայու համար: Ամենապատիւ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրութիւնի և Ամենապատիւ Տ. Շնորհք Պատրիարքի գեղոյցները միայն չեն ՍԻՈՆԻ սահմանափակ շրջանակին մէջ, այլ դառնալու են ամեն հայու մատչելի՝ Սփիւռքահայ մամուլին միջոցաւ:

Խիստ գնահատելի եւ սրտի մօտիկ են Համագումարին եղած առաջարկները՝ Լեզուակոս կանոն մը ստեղծելու եւ կեդրոնական թերթ մը հրատարակելու մասին:

Ամենապատիւ Տ. Եղիշէ Պատրիարքը արժանի է խորին շնորհակալութեան եւ շնորհաւորութեան, Համագումարի գաղափարը յղացած ըլլալուն համար: Նոյնպէս շնորհաւորելի է Գերշ. Տ. Եանէ Աբեղայիսկոպոսը, այդքան յաջող կերպով կազմակերպելուն համար այս անդրանիկ Համագումարը: Անտարակոյս, նման Համագումարներ կրնան խիստ օգտակար ըլլալ ոչ միայն մասնակցող եկեղեցականներուն, այլեւ բոլոր հայերուն:

Մեր եղբայրական ողջոյնները Քրիստոսով Ամենապատիւ Տ. Եղիշէ Պատրիարքին, իր գործակիցներուն, ՍԻՈՆԻ նմազարական կազմին:

Ջերմագին բարեւներով ի Քրիստոս՝  
(Վեր.) ԾԱՐՈՒԹԻՒՆ ՀԷԼՎԱՃՅԱՆ